

# ԻՆՉԵ ՈՒՏԻԼԵ

628.4

h - 61

Թ Ա Յ Լ Ի Մ  
1930 թ.

04 AUG 2010

ГАРМ.  
2-794а б-61  
б-61

зпу

ԻՆՉԵ ՈՒՏԻԼԸ

2819

Г.П.Б-на обяз. экз.  
Лнгр. 1980 г.  
Акт № 11-498

ԹԻՖԼԻՍ  
1980 թ.

26.04.2013

## Ի Ն Չ Ե ՈՒ ՏԻ ԼԵ

Սովորաբար արդյունաբերության մեջ հումուլիթ էն համարում այն ապրանքները, այն նյութը, վորից գործարաններն ու Փարբիկաները մշակում են իրենց արտադրանքը :

Զիսուելով Գանքերի (յերկաթի, պղնձի և այլն) նավթի և քարածիխ մասին, վորոնք ստացվում են անմիջապես հողից, հումուլիթի բոլոր տեսակները կարելի յերաժանել յերկու մասի, առաջինը՝ կենդանական հումուլը, վորը ստացվում ե անասուններից — բուրդ, կաշի, աղիքներ, յեղջուրներ, վոսկոր և այլն. Այերկրորդ՝ բուսական հումուլը՝ կտավահատ, բամբակ և այլն: Մարդիկ ոգտվում են հումուլիթի այդ տեսակներից իրենց անհրաժեշտ կարիքները հոգալու համար. Նրանցից պատրաստում են իրենց համար հագուստ, տնային անհրաժեշտ իրեր և ապրուստի այլ առարկաներ, զարդարում են իրենց բնակարանները և այդ իրերն իրենց անմիջական նպատակին ծառայելուց հետո (մաշված չորեր, վոտնամաններ և այլն), այրում են կամ դուրս են թափում :

Բայց մենք այնքան հարուստ և այնքան ապահովված չենք հումուլիթի պաշարով, վորպեսդի գեն ածենք

Ա. Ֆ. Մյասնիկյանի ան. հրատարակութ. Զարյա Վոստոկանի -ի

Գատվեր № 1790

Գլավլիս № 1695

Քանակ 2000



40604-63

այն իրերը, վորոնք վերջացրել են իրենց ծառայությունը, կատարել են իրենց նախնական դերը:

Մաշված և պատառութված շապիկը, խելացի կերպով վերամշակման յենթարկելով համապատասխան ֆարբիկաներում և գործարաններում, կարելի յեղարձնել նորից լավ, ամուր կաորք: Հին, մաշված կրկնակոչիկը կարելի յեղարձնել նոր: Նույնիսկ գրմած, պատառութված թղթից, հին գրքերից կարելի յեղարձնալ մաքուր, լավ թուղթ:

Այն ամբողջ խլամը և աղբը, վոր իզուր տեղ երանում ամին մի առանձին տնտեսության մեջ, կարող ե գեր շատ մեծ ոգուտ բերել. կարելի յեղարից ոգտագործել, վորպես հումուզիթ արդյունաբերության համար, ուստի և նա միանդամայն արժեքավոր և ոգտակար նյութ է:

Այդ աղբը սովորաբար կոչվում ե ուտիլ (ոտարքառ ե, վոր նշանակում ե «ոգուտ»), և կարող ե հումուզիթի յերբուդ տեսակը համարվել բացի բուսական և կենդանական հումուզիթ:

Սկզբում գործ եր ածվում միայն հին փալասը, թուղթ ստանալու համար: Ապա գտան հին բրդի փալասներից բրդի թեւեր, գործվաքներ, կտոր և մի շարք ոգտակար ու կարևոր իրեր ստանալու վերամշակման միջոցը:

Ներկայումս չկա այլ ևս վորեւ առարկա, վոր հնարավոր չիներ, այսպես թե այնպես, ոգտագործել, արթեքալոր ու կարեւոր իրեր ստեղծել:

Արտասահմանում հաշվել են, վոր ամեն մի բնակչի տարեկան գալիք և մոտավորապես 16 կիլոգրամ

միայն փալաս և յեթե այդ փալասը վոչնչացվեր, աբդյունաբերության համար ոգտակար հսկայական քանակությամբ նյութ կկորչեր իզուր տեղը: Ուստի և ամեն մի յերկրում կազմակերպված և ուտիլի հավաքման գործը, վորը հավաքելուց հետո տանում են ֆարբիկաները վերամշակելու համար:

Միայն Գերմանիայում, վորտեղ բնակչությունը կազմում է մոտավորապես 65 միլիոն, ամեն տարի հավաքվում է 1,25 — 1,5 միլիոն տոնն փալաս: Խսկ միջը 150 միլիոն բնակչություն ունեցող Միության համար այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են: Ներկայումս մերանում մոտավորապես 600—750 տոնն փալաս են հավաքում: Այդ բանը բացատրվում է ուտիլի հավաքման գործի վատ կազմակերպմամբ, և հրանով, վոր բնակչության լայն մասսաները չգիտեն, թե ի՞նչպիսի մեծ ոգուտ կարելի յեղանակ այդ, առյօնեալ, բոլորի համար անպետք աղբից և խլամից:

Անգլիական մանածագործներն ասում են. «Ամեն մի թելի կաոր ունի յերկու ծայր, ուստի և պետքական է գործելու համար» և այդ ասացվածքում թագնված ե շատ խորը միտք: Իրոք, արտադրության այժմյան տեխնիկայում, ժամանակակից կատարելագործված մանածագործական մեքենաներով տեքստիլ գործարանները լայն չափերով գործ են ածում ջուլհակության մեջ վերամշակված և ձեւափոխված փալասը, վորովհետև փալասի գինը հումուզիթից շատ ավելի եժան է: Յարբիկային այն գործվածքները, վորոնք գործածված են մի անգամ արգեն ոգտագործված փալասների խառնուրդից, ավելի եժան են, քան միայն մա-

քուր բրդից պատրաստված գործվածքները : Բացի այդ՝ ալելանում և նաև գործվածքների քանակը, վորոնց կարիքը մենք այնքան չառ ենք դուռմ:

Բայց կան նաև շատ ավրանքներ, վորոնք ուտիլ-հումուլթ են, և նույնպես մեծ չափերով գործ են ածվում ֆարբիկաների և գարծարանների արտադրության մեջ :

Այդպիսիների թվին ե պատկանում վոսկորը, վորն իրբե ավելորդ աղը, ստացվում ե յերշիկային (կալտրասի) արտադրությունից, կամ կերակուր պատրաստելիս համարվում ե խոհանոցներում. մեր հանրապետության լայնածավալ դաշտերում թափված են վոսկորներ, վորոնք մնում են սատկած անասունների փրակելուց, կամ զաղանների ու թուզունների պատառութած դիակներից: Վոսկորը սովորաբար մանրացրած ձեռլ գործ և ածվում հողի պարարտացման, շաքարի ֆիլտրացիայի, սոսինձ և այլ բաղմաթիվ ոդտակար իւրեր պատրաստելու համար :

Բացի այդ, ուտիլ են այն մետաղների կտորները, վորոնք վերահարվում են, հին թուղթ, այլ կերպ կոչված՝ մակլատուրան, վորից պատրաստում են նոր թուղթ, լրագրների, տետրերի, նամակների և այլերի համար, կաշու կտորները և հին վոտնամանները, վորոնք սովորաբար գործ են ածվում դաշտերի սղարտացման համար, և մի շարք այլ անպետքացած իւրեր: Ասվածից բոլորի համար պարզ պետք ե լինի, վոր այսպես կոչված, ուտիլը, հակայական նրանակություն ունի արդյունաբերության համար, ուստի և արժանի յէ մեծ և լուրջ ուշադրության վոչ մի-

այն այդ գործով զբաղվող մասնագետների, այլ և բնակչության ամենալայն մասսաների կողմից :

Մեր արդյունաբերության զարգացման արագ տեմպը, ֆարբիկաների և գործարանների հսկա աճումը պահանջում են տեխնիկական հումուլթի հավաք ժամ ցգալի ավելացում :

Ամեն մի գիտակից աշխատալոր գյուղացի կամ բանվոր, կարմիր բանակային, կամ տանտիկին, պիտի մտածի այդ մասին, վորպեսզի իրեն կողմից մասնակցություն ցույց տա մեր գործարանների և ֆարբիկաների հումուլթի պահանջի բավարարման գործին: Առանց վորեւ միջոց ծախսելու, ուստիի մթերում կատարող գոստորդից և կոռպերացիայից կարելի յէ խնայել հսկայական քանակությամբ վալյուտա, և մատակարաբել արդյունաբերությանը պահանջիով հումուլթ :

Միաժամանակ պետք ե հիշել, վոր ոտարերկրյա գործարանները շատ շահաղբոված են ստանալու մեջ-նից մեր ուտիլը: Նրանց գործարաններին չի ըավականանում սեփական հումուլթը, և նրանք ստիպված են այդպիսին ներմուծել արտասահմանից: Այս բանից ոգտվելով, մենք կարող ենք մեր արդյունաբերությունից մնացած ամբողջ ավելցուկն արտահանել արտասահման և դրանից զոյացած փողով դնել մեքենաներ՝ մեր գործարանների համար տրակտորներ՝ գյուղատնտեսության համար :

Ուտիլի հավաքման մեր հնարավորությունները հսկայական են: 1925—26 թ. մինչեւ 1928—29 թվականներն ուտիլի հավաքումը զրեթե ավելացել և վեց անգամ: Իսկ հնգամյակի վերջում՝ 1932—33 թվին

պետք ե հավաքվի ավելի քան մեկ միլիոն տոնն (60 միլիոն փութ), կամ 25 անգամ ավելի այդ գործը սկսած՝ 1925—26 թվականից։ Այնուամենայնիվ այդ քանակը նույնպես դեռ բավական չե, վորովհետև նա կազմում ե աղբի, կամ անաղետք խլամի միայն կիսից մի քիչ ավելին։

Բայց, վորպեսզի հավաքվի ուտիլի այդ քանակությունը, անհրաժեշտ ե բոլոր աշխատավորների ոժանդակությունը և մասնակցությունը, հարկադրու և, վորպեսզի ամեն մի աշխատավոր գիտենա այն մասին, թե ի՞նչ ոգուտ կարելի յե ստանալ անպետք և ավելորդ աղբից, ի՞նչպես պետք ե ոլահպանել փալասը և ուտիլի մյուս տեսակները։ Անխնամ և անուշադիք վերսրեմունքն ուտիլի գործին հաճախ հասցնում ե այն բանին, վոր հավաքած ուտիլը փոտում ե և արդյունաբերության համար դասնում բոլորովին անպետք։ Վորպեսզի իմանան, թե ի՞նչ ե ուտիլը մ ի՞նչպես պետք են վարվել նրա հետ, հարկավոր ե մանրամասն կանգ առնել նրա տարբեր տեսակների վրա։

## ՓԱԼԱՍԸ

Ուտիլի հիմնական և դլիսավոր տեսակը, վոր կազմում ե նրա ամբողջ քանակի կեսից ավելին, հանդիսանում ե տեքստիլ գործվածքների գործածությունից հետո մնացած ալիքորդ մնացորդները, կամ ժողովրդական բառով ասած՝ փալասը։

Հստ այն թելի տեսակի, վորից կազմված ե փալասը, այդ ուտիլը կարելի յե բաժանել յերկու մասի,

ինւական ծագում ունեցող և կենդանական ծագում ունեցող փալաս։

Առաջին տեսակին ե վերաբերում բամբակի, կտավհատի, թելերից գործվածքի փալասը, վորոնք ձեռք են բերում վոչ միայն մեր Միության մեջ, այլ և ներմուծում են արտասահմանից։

Կենդանական ծագում ունեցող՝ բրդի թելերի գործվածքների փալասը կազմում է փալասի յերկորդ տեսակը։

Հավաքած փալասը, ինչպես արդեն վերևու ասվեց, վերամշակվում ե արդյունաբերության մեջ և վեր ածվում զանազան տեսակի գործվածքների։ Փալասի սպառողներին, կոպիտ կերպով, կարելի յե բաժանել յերկու կատեգորիայի։

Փալասի սպառողների առաջին կատեգորիային են պատկանում թղթի և տոլային (տօւեա) արդյունաբերությունը։ Ներկայումս կտավհատի և բամբակի փալաս սպառող Փարբիկաների թիվը հասնում է 30-ի։ Նրանց պահանջը կազմում է տարեկան մոտ 40000 տոնն (2,5 միլ.) այլ տեսակի փալաս։

Վորպեսզի կտավհատի, կամ բամբակի փալասը կարողանա զնալ թղթի Փարբիկաները վերամշակման, անհրաժեշտ ե այդ յերկու տեսակի փալասներն ել համապատասխան ձեռլ տեսակավորել։ Վոչ մի գեպքում չի թույլատրվում նրանց խառնել ընդհանուր մասսայի հետ։

Տարբերել բամբակի և կտավհատի փալասը, վորոչ նշաններ իմանալու դեպքում, առանձնապես դժվար չի, վորովհետև բամբակի փալասը սովորաբար ավելի

փախուկ ե, գործվածքի միջի թելերն ավելի բարակ են, ընդհակառակը, կտավատի գործվածքն ավելի կոպիտ ե և թելերն ավելի ուսուցիկ են: Ներկելիս բամբակի գործվածքներն ընդունում են ավելի պայծառ գույներ, ուստի նույնակես հեշտ ե տարբերել:

Բացի այդ, բամբակի փալասներին են վերաբերում նաև բամբակե հաղուստները:

Փալասի այդ տեսակը գործ ե ածվում արդյունաբերության առանձին տեսակի — Փարբիկային արդյունաբերության մեջ, զորը պատրաստում ե ամուր կարտոն, պայուսակներ արկղներ և այլն:

Բամբակի և կտավատի փալասի խոչոր կտորները, սովորաբար առանձնացվում են ընդհանուր մասսայի միջից և գործ են ածվում մեքենաները, դադահները, չոգեմեքենաները սրբելու համար:

Կտավատի փալասներն իրենց հերթին պետք ե բժժանվեն.

1. Էստ գործվածքի բնույթի — քաթան, բրեդինտանման կտոր և բամբակի կտավտի գործովածք:

2. Էստ գույնի՝ սպիտակ, բնական գույնի և ներկված:

3. Էստ մաքրության՝ մաքուր, կիսակեղտոտ (տեղ-տեղ կեղտոտ) և կեղտոտ ու մաշված, ամբողջովին ցեխի մեջ կորած,

4. Էստ ամրության՝ ամուր — պատռելիս դժվարությամբ պատռվող և վոչ ամուր — հեշտությամբ պատռվող:

Վորովհետու հեշտությամբ պատռվող փալասը փտած ե լինում, ապա նա համարվում ե անպետք և

կարելի յե գործ ածել միայն վատ տեսակի թուղթ ստանալու համար (տոլային կարտոն և այլն):

Բամբակի փալասը բաժանվում ե տեսակների միայն ըստ գույնի և ըստ մաքրության, վորովհետու մուգ և կարմիր գույները հեշտությամբ չեն մաքրվում ներկից և չեն կարող տալ մաքրուր, սպիտակ թուղթ:

Փալասն ըստ տեսակների բաժանելիս մեծ ուշադրություն են դարձնում նաև գործվածքի մշակման ձևի վրա: Դյուզական միջոցներով մշակված գործվածքներն ավելի թանգ են գնահատվում, վորովհետու նըրանց միջի թելերն ավելի ամուր են և ավելի քիչ են լինում մաշված, չնորհիվ այն բանի, վոր նրանք մանված և գործված են տնային գաղղահների վրա և վոչ հատուկ գործարանային մեքենաների:

Գործարանային մշակությունն ընդհակառակը, գործվածքի թելեր ավելի յե քաշում և մասումք նույնիսկ կտրտում ե և կարճացնում ե, վորը պակասեցնում է այդպիսի գործվածքի փալասի վերաբնակման հնարավորությունը:

Այստեղ ավելորդ չի լինի հիշել, վոր թղթի բոլոր տեսակները պատրաստում են փալասից: Թղթի մեծ մասը, ավելի շատ գործածվող և գնի տեսակետից մատչելի, պատրաստվում է այսպես կոչված ցելյուրոգից — հատուկ ձևով մշակված փայտից և մակարտուրայից — հին, ոգտագործված թղթից, վորի մասին դեռ կիսումի մանրամասն: Իսկ փալասից պատրաստվում ե ավելի լավ տեսակի թուղթ, ավելի յերկար ժամանակ գործածվող և ավելի դիմացկուն:

Կտավի և բամբակի փալասը, բացի թղթի արդյու-

նարերությունից, սպառում են նաև տոլ (ТОЛ) արտադրող գործարանները, վորը փոխարինում է թիթեղյա, հարդյա տանիքներին։ Տոլը ներկայացնում է իրենից կարծր կարուն, սունձով հաղեցրած և խառնած մանր ավազ։ Տոլային կարտն ստանալու համար գործ են ածում փալասի ամենացածր տեսակները, բոլորովին մաշված և կտրտված թելերով։

Փալասի սպառողների յերկորդ կատեգորիային և վերաբերում տեքստի արդյունաբերությունը։

Տեքստի արդյունաբերությունը սպառում է գրլիավորապես վոչխարի, գառան, ուղտի և այծի բուրդ։

Բրդի հումութն իր նախնական դրությամբ աչքի յելնինում հետեւալ նշաններով։

1.) Փափկությունն ունի հիմնական նշանակություն, վորովհետեւ նրանից և կախված գործվածքի վորակը։ Կողիտ բրդից կարելի յեւ ստանալ միայն կոպիտ բրդյա, ծանր գործվածքներ։

2. Խճճվածությունն ու բարակությունը — Այս յերեք հատկություններից նույնպես կախված և գործվածքի վորակը։ Ինչքան բարակ, յերկար և խճճված բրդը, այնքան բարձր կլինի գործվածքի հատկությունը։

3. Գույնը, ամենից գնահատելին սպիտակ, բնական գույնն եւ, վորովհետեւ այս հեշտ և ներկել ցանկացած գույնով։

Միանգամայն հասկանալի յեւ, վոր թված յերեք հատկություններն ամուիջականորեն վերաբերում են նաև բրդի թելերից կազմված փալասներին, այսուղ հարկավոր եւ առել միայն այն, վոր բրդի գործվածք։

Ներից նորից թել վերաբառավերելու տեսակենուց, վորակի գնահատման համար հիմնական նշանակությունը ունի, փալասներից թելերն իրարից բաժանելու հեշտությունը։

Այսպես կոչված արհեստական բրդի մշակությունը (արհեստական կերպով ստացվող բրդի թելի) կատարվում է հատուկ մեքենաներվ, վորոնք բաժանում են գործվածքները թելերի։ Ինքնլստինքյան համկանվալի յեւ, վոր փալասը, ոգտագործման տեսակետից, վորքան հեշտ և բաժանվում առանձին թելերի, այնքան գնահատելի յեւ։

Ուստի ամենահեշտ և ամենահասարակ կերպով վերամշակման են յենթարկվում ձեռքով գործված կտորների փալասները, վորովհետեւ նրանք տալիս են ավելի յերկար և ավելի դիմացկուն թելեր։

Գործվածքային ապրանքներից ավելի գնահատվում են կամ վոլային գործվածքները, չնորհիվ այն բանի, վոր նրանք մշակվում են ավելի բարակ, յերկար և խճճված բրդից։ Վերջին տեղն են բոնում մահուդի գործվածքները, վորովհետեւ նրանց թելերը մեծ դրժվարությամբ են բաժանվում իրարից։

Բայց այսուղ ինչպես նաև կտավի և բամբակե փալասների մեջ նշանակություն ունի գործվածքի մըշակման բնույթը։

Գյուղական տնական-գործած մահուդները, արհեստական բուրդ ստանալու համար, ավելի արժեքավոր են, քան գործարանայինը։

Արհեստական բուրդ ստացվում և նաև հին մուշտակից և նրա առանձին ծվեններից։ Այդ դեպքում

Հարկավոր ե մորթու վրայից խուզել բուրդը, իսկ  
մնացած մաղերը կարելի յե ողտագործել թել ստանա-  
լու համար:

Բացի մաքուր բրդի փալասներից, արհեստական  
բուրդ ստանալու համար վերամշակում են նաև իսու-  
նուրդ կտորների փալասները: Խառնուրդ կտոր ե կոչ-  
վում կիսաբրդյա կտորը, վորին ավելացրած ե կտա-  
վէ, կամ բամբակի թելեր: Խառնուրդ կտորից նորը  
ստանալու համար մինչև թելերի բաժանելը յենթարկ-  
վում ե նախնական վերամշակման—կարբոնիզացիայի,  
այսինքն հատուկ քիմիական խառնուրդով այրման են  
յենթարկվում բուսական թելերը:

Իրդի փալասներին են վերաբերում նաև թաղիքն  
կտորները, թաղիքը, թաղիքյա վոտնամանները, վո-  
րոնք չատ քիչ են սպառվում մեր արդյունաբե-  
րության մեջ, վորովհետև միանգամայն դժվար  
ե այժմյան տեինիկական պայմաններում վերամշակել  
և արհեստական բուրդ ստանալ: Այդ ուտիլը մեծ մա-  
սամբ արտահանվում ե արտասահման և այնտեղից  
գոյացած միջոցներով կարելի յե գնել սարքավորում  
մեր քարբիկաների և գործարանների համար և գյու-  
ղատնտեսական մեքենաներ՝ հողագործության համար:

Իրդի փալասների մի մասը (մեծ մասամբ թաղի-  
քյա փալասները) վաճառվում ե տոլային արդյունա-  
բերությանը, վորը սպառում ե այն, ինչպես և կտա-  
վի ու բամբակի փալասները, կտորներ պատրաստելու  
համար:

Տեքստիլ արդյունաբերության արհեստական բրդի  
պահանջը չի բավարարվում ներկայիս հավաքվող

փալասների քանակով: Բավական զգալի մասը (բա-  
ցառապես իսպակուկ-բրդյա փալասներ) ստիպված ենք  
ներմուծել արտասահմանից, ինչպես և ստիպված ենք  
արտասահմանից գնել նաև նոր բուրդ:

Խորհրդային հասարակության և առանձին քա-  
ղաքացիների անելիքը կայանում է նըանում, վոր ու-  
ժեղացվի այդ մթերումը, Միեվ կերպով մատակարար-  
վի արդյունաբերությունը պահանջված հումույթով:  
մանավանդ փակուկ-բրդյա փալասներով և այդպիսով  
ազատել նրան արտասահմանից կախում ունենալուց:

Բացի փալասների թված տեսակներից պետք ե  
հիշել նաև թոկերի խումբը, վորն ընդգրկում ե իր  
մեջ ցանցեր, թելեր, թոկեր, ոգտագործված կանատ-  
ներ, հին ջրաղացի ցանցեր, նույնպես և մաշ-  
ված, թելի վոտնամաններ: Մինչև հիմա ուտիլի այդ  
ամրող խումբը արտահանվում եր արտասահման,  
անհնար լինելով մեր արդյունաբերության մեջ ոգտա-  
գործել:

Ներկայումս «Ուտիլգոտատորդը» ձեռնրկել ե  
Նիժնի - Նովզորովովում հին գյուղացիական ցանցերի  
և այլ թոկերի փալասները վերամշակող, թելեր դար-  
ձնող մեծ կոմբինատի կառուցմանը՝ սարքավորմանը:  
Բացի հին փալասներից, ուտիլ կազմակերպություն-  
ների շրջանառության մեջ ե մտնում մի այլ տեսակի ու  
տիլ—կարի արդյունաբերության մեջ գործվածքների  
մանր կտորտանքը: Փալասի այդ տեսակը նույնպես ող-  
տագործվում ե արդյունաբերության նույն ճյուղերում,  
ինչպես և հին փալասը, այն տարբերությամբ միայն,  
վոր նոր գործվածքները աչքի յեն ընկնում իրենց թե-

լերի մեծ դիմացկանությամբ, ուստի մեծ արժեք էն ներկայացնում արդյունաբերության համար:

## Ո Ե Զ Ի Ն

Վերև մենք խոսեցինք գործվածքային ուստիլի, կամ փալասի մասին: Բայց կան դեռ ուստիլի շատ տեսակներ: Դրանց թվին ե պատկանում նաև ոեղինը:

Հիմնական հումույթը, վորից ստացվում ե սեղինը, հանդիսանում ե կառուչուկը: Կառուչուկը ներկայացնում ե իրենից հատուկ մի տեսակ ծառի հյութ, վորը բուսանում ե տաք յերկրներում: Մեր հանրապետության մեջ այդ ծառերը բուսնել չեն կարող, վորովհետեւ չունեն իրենց համար համապատասխան տաքություն և հող, ուստի և մենք ստիպված ենք կառուչուկը ներմուծել արտասահմանից, ծախսելով գրա վրա վայրուտա:

Սակայն գոյություն ունեցող տեխնիկան հնարավորություն ե տալիս արդեն մաշված ոեղինից վերականգնել համապատասխան վերամշակման միջոցով, նրա բոլոր հատկությունները: Ուստի ամեն տեսակի հին ոեղինը դեռևս ոգտակար նյութ ե (ուսիլ) և կարող ե ոգտակործվել շատ ավելի, քան մի անգամ:

Ամենամեծ արժեքը իրենից ներկայացնում ե ինք՝ ողեինը, ուստի և հավաքված մաշված ոեղինը բաժանվում ե տեսակների, մաքրվում ե քաթանից, ժեխիքից, կաշվից և ապա յենթարկվում ե հատուկ քիմիական վերամշակման, վորտեղ կտորի ամեն մի խառնուրդը այրվում ե թթվուտներով:

Դրանից հետո մնացող նյութը իր հատկություններով համարժեք ե ներմուծվող կառուչուկին:

Ներկայումս նոր պատրաստվող ոեղինա ապրանքների մեջ հին, արդեն ողտագործված ոեղինը կազմում է 25—30 տոկոսը. հնգամյակի վերջում այդ տոկոսը պիտի մեծացվի մինչև 50, յեթե միայն ինքը, ընակչությունը միջոցներ ձեռք առնի ուժեղացնելու հին ոեղինի հավաքումը և արդյունաբերության հանձնումը: Յարոսլավում կառուցվող ոեղինե ապրանքների հսկա գործարանը կապահնդի հումույթի մի այնպիսի քանակ, վորը կլանի ամբողջ ոեղինե ապրանքների ուստիլ:

Բայց մենք ըստ հին սովորության այրում ենք հին մաշված կրկնակոչվիները և այլ մեզ համար անպետք ոեղինը, մոռանալով, վոր այդ խամը մեծ փող արժի և կարող ե փոխարինել արտասահմանի հումույթին: 1928—29 թվին ուսիլ մթերողները հավաքել են հին կրկնակոչիկ մոտավորապես 10.000 տոնն (600 հազար վութ), իսկ ոեղինառողեստի գործարանները բաց են թողնում տարեկան 30—40 հազար տոնն ամեն տեսակի ոեղինի ապրանքներ, այնպես վոր հավաքված քանակը չի կազմում նույնիսկ մեկ յերրորդը այն քանակի, վորը հնարավոր է հավաքել: Ահա թե ինչու, վորքան խնամքով վերաբերվենք ըստ յերեւոյթին մեզ համար անպետք իրերին, այնքան շատ ոգուստ կտանք արդյունաբերությանը և մեզ: Հին ոեղին հավաքելու հարավորությունը մեր Միության մեջ՝ հսկայական և, և մենք պետք ե ողտագործենք այն:



Անցնենք ուտիլի հետեւյալ տեսակին—չոփին:

Ինչպես կտվահատից, նույնպես և նրա արմատաթելերից ստացված յերկար թելերը յենթարկվում են գործարանային, կամ տնայնադորժական վերամշակման և վեր են ածվում թելերի, կամ թոկ ու կանատային իրերի (վերջիններս գլխավորապես պատրաստվում են կտվահատի կողիտ մասից—արմատաթելերից): Բայց կտվահատը և արմատաթելերը դաշտից հավաքելուց և վերամշակման յենթարկելուց հետո, արտադրողների մոտ մնում են ալիբորդ մնացորդներ, գորոնք կոչվում են չոփ: Արդեն «չոփ» առունը միանդամայն բնորոշում և այդ ապրանքի բնույթը և հատկությունները:

Ծնորհիվ նրա կարճ թելերի, արտադրության ներկա պայմաններում այն կամ դեն և ածվում, կամ դործ և ածվում տանիքներ ծածկելու համար: Չոփը իր ծալումով բաժանվում է յերկու մասի. կտավից դերձան պատրաստելիս ստացվող չոփ և մանելուց ստացվող չոփ:

Գյուղացիական տնտեսություններում, մանավանդ կտվահատագրծական և կանեփագործական վայրերում, ուտիլի այդ տեսակից կուտակվում և հակայական քանակություն՝ տարեկան մոտավորապես 75—100 հազար տոնն (5—6 միլ. գութ): Իսկ մթերողները հավաքում են այդ քանակի 25—30 տոկոսից մի քիչ ավելին միայն: Մնացածը գյուղերում աննպատակ կերպով վոչնչացվում ե, առանց հասկանալու, զոր

չոփի հետ միասին տնտեսությունից դարձյալ աննպատակ և իզուր տեղը կորչում են միլլիոնավոր ոռորդիներ:

Մինչև վերջին ժամանակներս չոփը համապատասխան կերպով տեսակների բաժանելու և ցախերից ու կողմնակի խառնուրդներից մաքրելուց հետո, արտասահման եր արտահանվում, զորտեղ կար կտվահատա-արմատաթելային դերձանի մեծ կարիք, ուտի այդ ապրանքը բարձր գներով վերամշակվում եր և պատրաստվում գործվածքի համար պետքական թիւ: Իսկ մեզ մոտ այդ նյութը գործ եր ածվում միայն իրքի մեքենաների վրայից յուղը և ցեխը մաքրելու նյութ:

Ներկայումս մեզ մոտ կատարվում են չոփը վեարմշակման միջոցով թել դարձնելու փորձեր և այս տարվանից ուտիլի այդ տեսակից արդյունաբերությունը պիտի վերամշակի արդեն մեծ չափերով, զորը հնարավորություն կտա հիմնական հումուռյի—կտվահատի և արմատաթելերի պակասը զգալի չափով կրճատելու, և կտա բնակչությանը ալիբորդ մի քանի հարյուր հազար մետր զանազան կտավի գործվածքներ:

Տեքստիլ արդյունաբերությունից մնացող ավելցուկները:

Ինչպես գյուղացիական տնտեսության մեջ գործելիս և մանելիս ստացվում են զգալի քանակությամբ մնացորդներ (չոփ և այլն) նույնպես և տեքստիլ արդյունաբերությունը ունի մի շարք անպետք մնացորդներ, այսպես կոչված ուղար՝ «այրվածք»: Ուտիլի

այս տեսակն իր այդ անունը ստացել ե վերամշակման ժամանակ թելերի անհետ կորչելուց, յերբ թելերի մի մասը անհայտ կորչում ե «այրվում» է: Բայց այդ անունը փոխանցել է նաև անպետք մնացորդների մնացած մասին, վորովհետև արդյունարերության համար նրանք նույնպես կորած են:

Այսպես արդյունաբերության մեջ ստացվող ամրողջ կտավային հումույթի մոտ 10 տոկոսը դառնում է անպետք ավելցուկ: Բայց քանի վոր արտասահմանում այդ ուղարի պահանջը արդեն ներկայումս չափազանց չառ է, ուստի և ավելի ձեռնուու յե այն վաճառել արտասահմանյան գործարաններին ստանալով նըրանցից վայլուտա: Ինչպիսի մեծ տեղ է բռնում ուղարի արտասահմանումը, յերեսմ է նրանից, վոր կը տալատա արմատաթելային ավելցուկների 6—6,5 հազար տոնն ընդհանուր քանակից մոտավորապես 5—5,5 հազարը ուղարկվում է արտասահման:

Բացատրվում է այս բանը նրանով, վոր ԽՍՀՄ կտավատա-արմատաթելային դերձան արտադրողներից բռնում է առաջին տեղը:

Կտպատա-արմատաթելային ուղարի մի մասը ըստպառվում է մեր արդյունաբերության կողմից զլիսավորապես վոչ թե իբրև հումույթ, այլ իբրև մեքենաներ սրբելու նյութ:

Ներկայումս Միության մեջ կան մինչեւ 40 առանձին Փաբրիկաներ, վորոնք սպառում են այդ տեքստիլ ուղարը և բավական զգալի մասը աշխատում ու ուղիլ-հումույթով:

Վերջապես տեքստիլ ուղարի յերրորդ տեսակը

հանդիսանում է բրդի արդյունաբերության ավելցուկները: Այդ ավելցուկները, մանավանդ նրանց բարձր տեսակները, այնպես, ինչպես և արհեստական բուրդը մտցվում է կրկին անգամ արտադրության մեջ: Միայն նրանց աննշան մասը (գործվածքները զգելուց ստացվող չոփը) չնորհիվ զերծանի աննշան յերկարության անհնար և մտցնել արտադրության մեջ: Ուտիվ այդ տեսակը արտահանում են արտասահման, վորտեղ այն գործ են ածում դաշտերի պարարտացման համար:

Թված տեսակներով վերջանում է բռնական, կամ կենդանական ծագում ունեցող թելավոր նյութերից ստացվող ուտիվը: Բայց կա նաև ուտիվ մի ուրիշ խումբ, վորը իր հիմքում պարունակում է թելավոր նյութ, վորի համար հարկավոր է խսել առանձին: Այդ խումբը ունի միայն առանձին ընդհանուր կապ վերոհիշյալ տեսակների հետ:

### Մակուլատուրա

Ոսոքը, այս պես կոչված՝ մակուլատուրայի-այսինքն հին, ձեռագիր, կամ տպագիր, մի խոսքով այն բոլոր անպետք թղթի մասին է, վոր այրում են վառարաններում:

Մակուլատուրան կուտակվում է տպարաններում, Հրատարակչություններում, գրքի, կամ լրագրային հիմնարկներում, առևտրական, կամ արդյունաբերական ձեռնարկներում, բնակելի տներում և հասարակական զվարճավերի վայրերում (այդիներ, թատրոններ, պարկեր): Շատ մեծ քանակությամբ մակուլատուրա կարելի յե հանել արխիվային հիմնարկներից,

զորտեղ տարբներով հավաքում են, զանազան տեղեկանքների համար թղթեր, փաստաթղթեր հին դրքեր և ցուցակներ: Ինքնըստիշքյան հասկանալի յէ, վոր նշանակված ժամկետը անցնելուց հետո նրանք դառնում են բոլորի համար բոլորովին անպետք խլամ: Յեղել են որինակ, դեպքեր, յերբ Գոստորդը ստանում է արխիվների հին ցարական հիմնարկություններից մնացած գործեր, վորոնք արգեն 100—150 տարուց ավելի յէ գույթյուն չունեն: Վոչ մի պատմական, թանգարանային, կամ գիտական արժեք չունեն, այդ արծերը: Նման արխիվները անհրաժեշտ են ջոկել և ուղարկել Փարբիկաները, վերամշակելու նրանից նոր, մաքուր, սպիտակ թուղթ:

ԽՍՀՄ-ում կան մոտ 40 թղթի Փարբիկաներ, վորոնք հին ոգտագործված թղթից, յերբեմն ավելացնելով վորոշ քանակի ցելյուլոզ պատրաստում են նոր, լավ տեսակի թուղթ, թե զանազան իրեր փաթաթելու և թե դրեւու համար:

Արտասահմանում մակուլատուրայի ոգտագործումը այնքան բարձր է դրված, վոր որինակ Ամերիկայի թղթի զգալի մասը, բացառությամբ առանձնապես թանգարին և բարձր տեսակների, պատրաստվում է հենց այն հին լրագրների, տետրերի, կամ դրքերի մակուլատուրայից, վորոնք մենք այրում ենք, կամ դուրս թափում:

Մեզ մոտ մակուլատուրայի հավաքումը աննշան է: Ամեն տարի բոլոր մթերողների կողմից հավաքվում են ամբողջ արտադրած թղթի միայն մեկ տասերորդ ժամը: Որինակ՝ 1928—29 թվականին մակուլատուրա

հավաքված եր ընդամենը 60 հազար տոնն, այն ժամանակ, յերբ Անդիմայում այդ ուստիլից տարեկան հավաքվում է 200—250 հազար տոնն: Մակուլատուրայի, վատ հավաքման հիմնական պատճառներից մեկը հանդիսանում է այն, վոր բնակչության լայն շրջանները անտեղյակ են այդ տեսակի ուստիլի կարևորության մասին, վորի արդյունքն է հանդիսանում ծայրարհամարական վերաբերմունքը գեպի այդ «աղբը», վորը միլլիոններ արժե:

Վոսկոր

Ուստիլի տեսակներից մեկը պետք է համարել նաև կնեղանիների վոսկորները:

Պետական և կոռուպերատիվ մթերող կազմակերպությունների կողմից վոսկորը բաժանվում է յերեք հիմնական տեսակների, վորոնք կոչվում են ըստ իրենց կուտակման աղբյուրների: Ամենաարժեքավոր համարվում է յերշիկի վոսկորը, վոր ստացվում է յերշիկային արտագրությունից: Լատ արժեքի յերկրորդ տեղն է բոնում կերակրի կոսկորը — խոհանոցներից, կերակուրը յեփելուց ստացվող:

Վոսկորի այդ յերկու տեսակները մեր արտյունարերության մեջ վերամշակվում են այնպիսի ձևով, վոր վոսկորներից դուրս է գալիս ամբողջ նրանց մեջ յեղած ծուծը, կամ այսպիս կոչված վոսկորային ճարպը: Վոսկորային ճարպից պատրաստում են ստեարին, վորը գործ է ածվում մոմերի համար, ապա գլիցերին, վոր մեծ չափերով արտահանվում է արտասահման և վեր-

Հապես ոլեին — հատուկ խաւնուրդ, վորը գործ և  
ածվում տեքստիլ արդյունաբերության մեջ:

Ճարպահանված, նույնպես և ամենացածր տեսա-  
կի վոսկորից (յերրող տեսակի). — դաշտավիճ, այ-  
սինքն սատկած անասունների վոսկորից պատրաստ-  
ովում և դլամափրապես վոսկորի սոսինձ, վոսկորի  
ալյուր, վոսկորի ածուխ և ժելատին: Վոսկորի սոսին-  
ձը հայտնի է բոլորին: Նա գործ է ածվում թե ար-  
դյունաբերության և թե առանձին տնտեսություննե-  
րի մեջ: Վոսկորի ալյուր գործ է ածվում  
շաքարի արդյունաբերության մեջ շաքարի ֆիլ-  
տրացիայի համար: Բացի զբանից վոսկորը ար-  
տահանվում է արտասահման, վորտեղ նրան  
գործադրում են պարարտացման նպատակների համար:

Մեր Միության մեջ ներկայումս կա 10 վոսրկա-  
մշակման գործարաններ: Ընթացիկ հնդամյակի ըն-  
թացքում նախատեսնված է կառուցել գործյալ մի քա-  
նի խոչոր գործարաններ, վորոնց համար կարահնջլի  
հսկայական քանակությամբ հումույթ:

Ներկայումս վոսկար է հավաքվում հազիվ 100.000  
տոնն. իսկ հնդամյակի վերջին այդ քանակը պետք է  
ավելի քանի կրկնապատկի:

Այդ բանի հնարավորությունները մեր յերկրում  
հսկայական են:

Վերցնենք թեկուզ հենց լայնածավալ տափաստան-  
ները, վորտեղ տարիներով թափված է մնում դաշտա-  
յին վոսկորը և սպասում, թե յե՞րբ են հավաքելու և  
տանելու գործարանները, որուակար ու պետքական ի-  
րեր պատրաստելու համար: Բացի այդ մեր Միության

բնակչության բարեկեցությունը տարեցարի ավե-  
լանում ե, մոխ սպառումը աճում է, հետևապես և պի-  
տի ավելանա ճարպային (յերշիկի և կերակուրի) վոս-  
կորը: Ամբողջ հարցը կայանում է միայն նրանում,  
վորպեսպի բնակչությունը հասկանա ուտիլի այդ տե-  
սակի մեջ արժեքը արդյունաբերության համար:

Մեծ արժեք են ներկայացնում նաև յեղջյուրները և  
սմբակները՝ վոչ միայն ընտանի, այլ և վայրենի կեն-  
դանիների: Ուտիլի այդ տեսակը ծառայում է իրեն  
հումույթ կոճակներ, սանրեր և այլ իրեր պատրաստե-  
լու համար:

Հավաքված յեղջյուրի գդալի մասը արտահանվում  
է արտասահման և այնտեղից գոյացած փողով գնվում  
է Փարբիկաների և գործարանների համար սարքավո-  
րում:

Յեղջյուրները և սմբակները կարելի յե հավաքել  
վոչ միայն սպանդանոցներում, վորտեղ հավաքելը  
ուրատագիր է, այլ նաև առանձին դյուղացիական,  
կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններում, —  
տոհասարակ ամեն տեղ, վորտեղ մորթում են անա-  
ռուններ սննդի համար, նույնիսկ վորսի ժամանակ  
վորտեղ հանում են վայրենի կենդանիների յեղջյուր-  
ները և սմբակները:

Մետաղի կոռորտանել

Ուտիլի բոլորովին առանձին տեսակներն են կաղ-  
մում, մետաղի՝ յերկաթի և պողպատի կառները:  
Նրանք հատուկ վառարաններում (Մարտինի) հալման  
անհրաժեշտ բաղադրիչ մասն են կազմում: Մետաղի

կտորների պահանջը ներկայումս կազմում է տարեկան մեկ միլիոն տոնն :

Արագ աճող արդյունաբերության և ինդուստրիացման տեմպը, վորը կատարում են կոմմունիստական կուսակցությունը և կառավարությունը, արդեն այժմ պահանջում է մետաղի ուսիլի հավաքում մեր Միության մեջ:

Չնայած դրան միլիոնավար տոնն մետաղի կտորներ, առանց վորեւ հսկողության թափած են բայց յերկնքի տակ, փչանում և ժանդում են, այն ժամանակ, յերբ արդյունաբերությունը զգում է այդպիսի հումույթի մեջ սովլ:

Բացի հին յերկաթից և պողպատից, մեծ արժեք են ներկայացնում չուզունի կտորները, վոր հալում են չուզունե զանազան իրեր պատրաստելու համար — ինչպես՝ մեքենաների մասներ, զանազան խողովակներ և այլն:

Սպիտակ թիթեղը, թիթեղի մասը կտորանքները կամ հին պահածոյի տուփերը, — ունեն արժեք, չորհիվ այն բանի, վոր նրանք ծածկված են միանդամայն արժեքալոր նյութով — անազով։ Այդ մետաղը հաւնելու համար անհրաժեշտ է, վորակեսզի թիթեղը ժանդում վածի վորովհետև ժանդը ուտում է ամբողջ անազը։

Չհաշված անազը, չափազանց մեծ արժեք ունեն պղնձի և բրոնզի կտորտանքը, արձիճը, ցինկը, ալյումինը և մյուս գունավոր մետաղները, վորոնք ամբողջովին վերահալման են դնում։ Ներկայումս գունավոր մետաղների կարիքը այնքան մեծ է, վոր հանքերից

ստացվածը անկարող է այդ հումույթի ամրող պահանջը ծածկել և այդ ուսիլի գունավոր մետաղների կտորտանք հավաքելը հանդիսանում է մեր ամենքիս պարտականությունը։

Լուրջ; գործնական վերաբերմունքը դեպի մեր տնային գործածության, կամ արտադրության մեջ յեղած ամեն տեսակի յերկաթե կտորտանքը — կարող է փոքրացնել այդ հումույթի պակասը։

\* \* \*

Հիշված տեսակներով և խմբերով չեն սպառվում ուսիլ-հումույթի բոլոր տեսակներ։ Ամեն տարի, ամեն ամիս առաջ են գալիս նոր և նոր նյութեր, վորոնք կարող են փոխարինել արդյունաբերության բնական հումույթին։ Այսպես, արինակ՝ վերջերս մաշված վունամանները սկսեցին գործածել պարագաներ համար։ Կաշվի զանազան կտորտանքները արտաքանվում են արտասահման, վորտեղ նբանցից պատրաստում են կաշվի իմիտացիա (կեղծում)։ Այդ կաշվից պատրաստում են գեղեցիկ պայուսակներ, ճամփուկներ։ Ներկայումս փորձեր են արվում նույնը բուկներ։ Ամեն մի խոռ, ամեն մի առարկա, վորքանական կորցրած լինի իր նախնական նշանակությունը, այնուամենայնիվ կարելի յե ոգտագործել, ուտիլիդացիայի յենթարկել։ Այժմ յանցից դըմքար է ասել, թէ ուտիլի գործը ինչ զարգացման կարելի կլինի հասցնել լայն մասսաների ստեղծագործարքին ինիցիատիվով։ Համենայն դեպս ուտիլի այն տեկան ինիցիատիվով։

սակները, վորոնք գոյություն ունեն այժմ, ունեն հըս-  
կայական ապագա և զարդացման հեռանկարներ:

Ով և ընդունում ուտիլը

Այժմ մեզ համար պարզ է, ի՞նչ և ուտիլը և նրա ի՞նչ  
տեսակները կան մեր տնտեսության և ալտադրության  
մեջ, ինչպես քաղաքում, այսպես և գյուղում։ Հաս-  
կանալի յե նաև ուտիլի ունեցած նշանակությունը մեր  
արդյունաբերության համար։ Ուտիլ յեզրափակման  
մեջ ասենք՝ ո՞վքեր են հավաքում ուտիլը և ո՞ւր պետք  
է հանձնել այն։

Ուտիլի հիմնական հավաքողներն են հանդիսա-  
նում Գոստորդը և կոռպերացիան։ Գոստորդը ունի մեր  
ամբողջ յերկրում լայնորեն / ճյուղավորված ուտիլի  
հավաքման կայաններ և պահեատներ, վորոնք ի վիճա-  
կի յեն սպասարկելու ամբողջ Միության աղքարնակու-  
թյանը։

ԽՍՀՄ-ում չկա մի այնպիսի անկյուն, վորտեղ  
կապ հաստատված չլինի Գոստորդի մոտակա կայանի  
հետ։

Ամեն մի դյուդում, սպասակոռպի ամեն մի խա-  
նութ պարտավոր և ընդունել աղղարնակությունից ամ-  
բողջ հավաքած ուտիլը և հանձնել ։  
Բացի այդ հատուկ հավաքողներ շրջում են գյուղեց-  
գյուղ և փողով, կամ մանր ապրանքների — գալան-  
տերյայի, ապակեղենի, թաշկինակների, թելի, ասե-  
ղի, խաղալիքների հետ փոխանակության միջոցով ըն-  
դունում են ամեն տեսակի ուտիլ Գոստորդի համար։

Քաղաքներում կազմակերպված են հասուկ պա-

հեստներ, վորտեղ հավաքվում են բնակելի տներից ամ-  
բողջ աղբը։ Խնդիրը կայանում է նրանում, վորտեղի  
ամեն մի տան մեջ, ամեն մի բնակարանում գոյություն  
ունենա հասուկ արկղ, կամ պարկ, վորտեղ տանտի-  
կինները կհավաքեն ամբողջ անպետք խլամը, վորտի-  
կինները այնքան մեծ են մեր արդյունաբերության մեջ։

Ամեն մի Փարբիկա և գործարան են գալիս ժա-  
մանակ առ ժամանակ Գոստորդի հասուկ աշխատակից-  
ները և վերցնում են ամբողջ ուտիլը, վերամշակման  
համար ձեռնարկներին հասցնելու համար։

Արդյունաբերության մեջ մշակվող ամեն մի ավե-  
լորդ կելլողրամմ ուտիլը կտա ավելորդ արժեքներ և  
կավելացնի մեր յերկրի գործվածքների, թղթի, մե-  
տաղի, մեքենաների և այլ ապրանքների կարիքի բա-  
վարարումը։

Դուրս մի թափեք ուտիլը, բացատրեցեք ձեր ըն-  
կերներին և հարեաններին նրա ունեցած նշանակու-  
թյունը ժողովրդական տնտեսության համար։

Ուտիլի ամեն մի հանձնողը, վոչ միայն ավելաց-  
նում է իր անձնական յեկամուտը, այլ կատարում է  
մեծ, հասարակական գործ։ Ուտիլի չատ տեսակները  
բավարար չափով չեն հավաքվում։ Գործ չատ կա  
անելու։

Ուտիլի հավաքման դործում անհրաժեշտ ե ընդ-  
դրկել դյուղական ՓՈԿ-երը, հարկավոր և կազմակեր-  
պել ուտիլի պարբերաբար հանձնումը կոլեկտիվ և  
խորհրդային տնտեսությունների կողմից։

Քաղաքներում անհրաժեշտ ե այդ գարծի մեջ քա-  
շել գործադրությունների կոլեկտիվիները։ Այդ բանը մի

կողմից վորչափ կպակասեցնի գործազրկությունը, մյուս կողմից՝ կավելացնի արդյունաբերությանը, հանձնվող քանակը:

Միաժամանակ բնակչությունը կսովորի պահուանել ուստիլը և հանձնել այն հատկապես այդ գործով զրադշող կազմակերպություններին:

Ուստիլ հավաքողների մի մասը կազմված է մսի առևտրականներից, չարչիներից, ձայնագուրկներից և նախկին առևտրականներից, վորոնք մեզ սոցիալապես խորթ են:

Նրանց պետք է փոխարինել մեր խորհրդային հավաքողներով:

ՀԼԿՅՅԵՄ-ի ԿԿ-ի վերջին պլենումը վորոշեց կազմակերպել հատուկ կոմյերիտական բրիգադներ, կոմյերիտ — արշավ ուստիլ հարվաքելու և բացատրական կամպանիա անցկացնելու համար և կազմակերպել յերկարատես միահամուռ աշխատանք ուստիլ մթերող կազմակերպությունների հետ միասին:

Ամեն մի բանվոր, գյուղացի, ծառայող, տանտիկին, յերիտասարդությունը, պիոներները, դպրոցականները և բոլոր հասարակական կազմակերպությունները պարտավոր են ողնել կոմյերիտամիությանը և արձագանք տալ նրա կոչին:

Միայն աշխատավոր լայն մասսաների մասնակցությունը, կղնի ուստիլի հավաքման գործը հարկավոր բարձրության վրա, կթուլացնի հումույթի կախումը ստարյերկրա կապիտալից և կիմայի մեր վայլուտան:

Ուտիլի հավաքմանը և հանձնմանը մասնակցություն ցույց տալով, ոգնած կլինինեն հնգամյակի ավելի արագ կատարմանը, կարագացնենեն մեր սոցիալիստական շինարարությունը:

---

ԹՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b2

Ի՞նչ ե ռւախիւ  
Փոլտօք . . . . .  
Անգինը . . . . .  
Զօփ . . . . .  
Տեղատիւ արդյունաբերությունից մնացող տվյալցուկները  
Մակարաւրա . . . . .  
Վասկոր . . . . .  
Մեամղի կտորատնք  
Ո՞վ ե ընդունում ռւախիւ

1. Երեկան
2. Լենինական
3. Ղարակլիս
4. Դիլիջան
5. Կիզեն-կոչ
6. Մուլա պեհանուկի
7. Նոր - Բայազեն
8. Ստելլանավան
9. Կամարլու
10. Աֆմաճին
11. Ե. Աբոստ
12. Ելենովկա



«Ազգային գրադարան»



NL0282063

14.028

ԳՐԱԴԱ Ե 10 ԿՐՊ.

1 234

ԿՈՄՍՈՄՈԼՆԵՐՆ ՈՒ ՊԻՌՆԵՐՆԵՐԸ  
ՊԵՏՔ Ե ՈՐԻՆԱԿԵԼԻ ԼԻՆԵՆ ՈՒՏԻԼ  
ՀԱՎԱՔԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

ԱՄԲՈՂՋ ՈՒՏԻԼԸ ԽՍՀՄ ԻՆԴՈՒ-  
ՏՐԻԱԼԻԶԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՐ

Գրականության համար դիմել Թիֆլիս Կոմիսարներնի

Փաղոց „Զակուտիլ“ տեղեգուն № 22/67